ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 40 78 36 foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

11.06.2018թ.
332-ի 9

ՀՀ վարչապետ՝
պարոն Նիկոլ Փաշինյանին

ԿՐԿՆԱԿԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Մեծարգո Վարչապետ,
Սույն թվականի մայիսի 23-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ՝ Շուշան Դոյդոյանի կողմից ուղարկվել է տեղեկատվություն ստանալու հարցում՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար պարոն Էդուարդ Աղաջանյանին (կից ներկայացնում եմ հարցման պատճենը)։
Հարցմամբ խնդրել ենք տրամադրել՝ 2018 թ.-ի հունիսի 6-ի դրությամբ որո՞նք են ՀՀ կառավարության աշխատակազմում առկա թափուր հաստիքները։ Ինչպես նաեւ նշել աղբյուրը, թե որտե՞ղ են դրանք հրապարակվել։
Սույն թվականի մայիսի 30-ին ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար պարոն Էդուարդ Աղաջանյանը պատասխան գրությամբ նշել է, մեջբերում եմ. «…ՀՀ կառավարության աշխատակազմի լուծարման և վարչապետի աշխատակազմի ձևավորման … գործառույթները կատարելուց հետո պարզ կլինի թափուր հաստիքների առկայությունը։ » (կից ներկայացնում եմ պատասխանի պատճենը)։
Ձեզ եմ հայտնում հետևյալը.
1. Գործող **ՀՀ Սահմանադրության 150-րդ հոդվածի** համաձայն. « Կառավարությունը կազմավորվում է վարչապետ նշանակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում։ … »
Սույն թվականի մայիսի 8-ին կայացած ազգային ժողովի նիստին Դուք ընտրվել եք որպես ՀՀ Վարչապետ։ Ստացվում է, որ մինչև սույն թվականի մայիսի 23-ը կառավարությունը կազմավորվել է։
2. **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով** և մասնավորապես հոդվածի 1-ին և 3-րդ կետերով տեղեկատվության տնօրինողների վրա դրված է տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը ապահովելու և տեղեկություններ փնտրող անձին հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն տրամադրելու պարտականությունները։
3. **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով** տեղեկատվություն տնօրինողների վրա դրված է տեղեկատվությունը սեփական նախաձեռնությամբ հրապարակելու պարտականություն տարին առնվազն մեկ անգամ, իսկ փոփոխություններ կատարելու դեպքում՝ 10-օրյա ժամկետում։ **Հոդվածում թվարկվում են պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները, որոնց թվում են նաեւ թափուր աշխատատեղերը (հոդված 7, 3-րդ մաս, 5-րդ կետ)։**

7-րդ հոդվածի 5-րդ մասը ամրագրում է, որ պարտադիր հրապարկման ենթակա տեղեկությունները պետք է հրապարակվեն հանրության համար մատչելի ձեւով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաեւ դրանով:

Սույն հոդվածի հիմքով, կարելի է արձանագրել, որ ՀՀ կառավարության աշխատակազմում հաստիքացուցակների փոփոխությունների հրապարակումը պետք է իրականացվի ոչ թե կամայականության սկզբունքով, այլ դա կրում է պարտադիր բնույթ բոլոր տեղեկատվության տնօրինողների համար:
ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար պարոն Էդուարդ Աղաջանյանը ոչ միայն չի ապահովել ՀՀ կառավարության աշխատակազմի թափուր հաստիքների վերաբերյալ տեղեկատվության պարտադիր հրապարակայնությունը, այլ նաև հրաժարվել է տրամադրել տեղեկություններ փնտրող անձին՝ հարցման հիման վրա: ՀՀ կառավարության աշխատակազմում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Փաստորեն. տեղի է ունեցել կրկնակի իրավախախտում:
Ի դեպ նշենք, որ նույնաբովանդակ հարցմանը ՀՀ բոլոր նախարարությունների ղեկավարները տրամադրել են պատշաճ տեղեկատվություն թափուր աշխատատեղերի մասին, ինչպես նաեւ հստակ նշել հրապարակման աղբյուրները: Բոլոր հարցումները եւ պատասխանները հասանելի են «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի էլեկտրոնային շտեմարանում՝ www.givemeinfo.am:
Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական հիմքերը, նաեւ այն փաստը, որ սա նոր Հայաստան է, և մենք այլևս ապրում ենք այլ իրականությունում՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ.
1. տրամադրել տեղեկություն 2018 թ.-ի հունիսի 6-ի դրությամբ որո՞նք են ՀՀ կառավարության աշխատակազմում առկա թափուր հաստիքները:
2. Նշել աղբյուրը, թե որտե՞ղ են դրանք հրապարակվել, այդ թվում՝ Կառավարության պաշտոնական կայքում:
«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալություն՝

ԻԱԿ նախագահ
Շուշան Դոյդոյան